

2011թ. սեպտեմբերի 27-ին կայացած Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2011/2012 ուստարվա ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
/Չեկ. Ա.Սարգսյան/
2. 2011/2012 ուստարվա ընդունելության քննությունների արդյունքները:
/Չեկ. Վ.Վարդանյան/
3. Զննաշրջանի լուծարքի արդյունքների ամփոփում:
/Չեկ. Ա.Գրիգորյան/
4. 2011/2012 ուստարվա մագիստրատուրայի դասընթացների աշխատանքային ծրագրերի քննարկում և հաստատում:
/Չեկ. մեթ. խոր.նախագահ Թ.Վարդանյան/
5. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ** - 2011/2012 ուս. տարվա գիտական խորհրդի աշխատանքային պլանի նախագծի քննարկումը՝ գեկուցող գիտ. քարտուղար Արամայիս Սարգսյանը (գեկուցումը կցվում է): Չեկուցողը մանրամասն ներկայացրեց այն բոլոր հարցերը, որոնք քննարկվելու են ֆակուլտետի գիտական խորհրդում ընթացիկ ուսումնական տարում:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն Ա.Սարգսյանի կողմից ներկայացված գիտական խորհրդի աշխատանքային պլանի նախագիծը:
2. Աշխատանքային պլանը բաժանել բոլոր ամբիոններում՝ քննարկման համար, որոնց առաջարկությունների հիման վրա կազմել ֆակուլտետի գիտական խորհրդի 2011-2012 ուստարվա շխատանքային պլանը:

2. **ԼՍԵՑԻՆ** - 2011/2012 ուստարվա ընդունելության քննությունների արդյունքների վերաբերյալ դեկանի տեղակալ Վ.Վարդանյանի հաղորդումը: Չեկուցողը նշեց, որ ընթացիկ ուսումնական տարում ֆակուլտետ են ընդունվել 32 ուսանող: Բավականին շատ է ընդունվող ուսանողների թիվը մագիստրատուրայում: Բացառությամբ երկրաքիմիայի ու ջրաօդերևութաբանության և ֆիզիկական աշխարհագրության ամբիոնների, մյուսներում լրացված են մագիստրանտների քանակը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել Վ.Վարդանյանի գեկուցումը ընդունելության քննությունների վերաբերյալ:
2. Առաջարկվեց բոլոր ամբիոններին մեծ ուշադրություն դարձնել ընթացիկ ուսումնական տարում դպրոցներում բացատրական աշխատանքներ տանել ֆակուլտետի մասնագիտությունների կարևորության մասին, որը կավելացնի ֆակուլտետ դիմող դիմորդների թիվը:

3. **ԼՍԵՑԻՆ** - Ֆակուլտետում քննաշրջանի լուծարքի արդյունքների վերաբերյալ դեկանի տեղակալ Ա.Գրիգորյանի հաղորդումը: Չեկուցողը նշեց, որ ավարտվել է քննաշրջանի 3-րդ լուծարքը, կան բավականին շատ ուսանողներ, որոնք շատ անբավարար են ստացել, նրանց ցուցակը ներկայացված է ռեկտորատ՝ 4-րդ լուծարքին մասնակցելու թույլտվություն ստանալու համար: Կա այն կարծիքը, որ լուծարքները անհրաժեշտ է անցկացնել հանձնաժողովներով, ավելի օբյեկտիվ լինելու համար: Անբավարար գնահատականները շատ են ինչպես մաթեմատիկա,

ֆիզիկա, քիմիա, այնպես էլ աշխարհագրական և երկրաբանական առարկաների գծով, որի համար մեթոդ խորհրդում անհրաժեշտ է քննարկել այդ դասընթացների առարկայական ծրագրերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ա.Գրիգորյանի գեկուցումը քննաշրջանի 3-րդ լուծարքի արդյունքների վերաբերյալ ընդունելի գիտություն:

2. Ցանկալի է, որ մասնագիտության ընտրության կողմնորոշման գործում սխալ թույլ չտալու համար ամբիոնի վարիչները զրուցեն երկրորդ կուրսի ուսանողների հետ:

3. Ցանկալի է, որ մաթեմատիկա, ֆիզիկա և քիմիա առարկաների ուսումնական ծրագրերը քննարկվեն ամբիոններում և մեթոդ խորհրդում:

4. ԼՍԵՑԻՆ - 2011/2012 ուստարվա մագիստրատուրայի դասընթացների աշխատանքային ծրագրերի վերաբերյալ մեթ. խոր.նախագահ Թ.Վարդանյանի հաղորդումը: Ձեկուցողը նշեց, որ մագիստրատուրայում կարդացվող բոլոր առարկաների ծրագրերը քննարկվել և հաստատվել են մեթոդ խորհրդում, հաշվի առնելով ամբիոնների առաջարկությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Թ.Վարդանյանի գեկուցումը ընդունելի գիտություն:

2. Հանձնարարել ամբիոնի վարիչներին ուսումնական պրոցեսը մագիստրատուրայում անհրաժեշտ մակարդակով կազմակերպելու համար:

5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ա/ ԼՍԵՑԻՆ - Միներալոգիայի, պետրոգրաֆիայի և երկրաքիմիայի ամբիոնի վարիչ Շ.Խաչատրյանի հաղորդումը ամբիոնի դոցենտ Հ.Գույումջյանի կողմից գրած “Магматизм и метасоматические образования Армении” մենագրությունը հրատարակության համար երաշխավորություն ստանալու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հ.Գույումջյանի կողմից գրած “Магматизм и метасоматические образования Армении” մենագրությունը երաշխավորել տպագրության:

բ/ ԼՍԵՑԻՆ - Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ, աշխ.գիտ.թեկնածու Թ.Վարդանյանի դոկտորական ատենախոսության թեմայի վերնագրում մասնակի փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ, աշխ.գիտ.թեկնածու Թ.Վարդանյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել հետևյալ վերնագրով “Колебания стока рек Армении и его прогноз при глобальном изменении климата”:

գ/ ԼՍԵՑԻՆ - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Գրիգորյանի հաղորդումը «Տիգրան Ջրբաշյան»-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Առաջարկվեց երկրաբանության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Սարգիս Սոսի Մանուկյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով Սարգիս Սոսի Մանուկյանի ուսման գերազանց առաջադիմությունը, հասարակական ակտիվ գործունեությունը և խորհրդի անդամների դրական կարծիքը՝ «Տիգրան Ջրբաշյան»-ի անվան կրթաթոշակը հատկացնել Ս.Ս.Մանուկյանին:

դ/ ԼՍԵՑԻՆ - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Գրիգորյանի հաղորդումը «Գևորգ Ալիշան»-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Առաջարկվեց սերվիս բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Շամամ Վարդանի Գևորգյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով Շամամ Վարդանի Գևորգյանի ուսման գերազանց առաջադիմությունը, հասարակական ակտիվ գործունեությունը և խորհրդի անդամների դրական կարծիքը՝ «Գևորգ Ալիշան»-ի անվան կրթաթոշակը հատկացնել Շ.Վ. Գևորգյանին:

Ե/ ԼՍԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի ելույթը «Սերվիս» մասնագիտությամբ մագիստրատուրա բացելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով «Սերվիս» մասնագիտության պահանջարկը հանրապետությունում՝ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնում բացել մագիստրատուրա «Սերվիս» մասնագիտությամբ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Ս.ՍԱՐԴԱՐՅԱՆ